Լեոնիդ Չեչուրին. Արդյունաբերական ճարտարագիտության և կառավարման պրոֆեսոր (տեխ.գ.դ.) Լապինրանտայի տեխնիկական համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետի արդյունաբերական կառավարման բաժնի պրոֆեսոր, նույն համալսարանի System Engineering խմբի ղեկավար,

Հետազոտական հետաքրքրության ոլորտներն են. դինամիկ համակարգերի մաթեմատիկական մոդելավորում և վերլուծություն, համակարգի դինամիկայի վերլուծություն՝ հիմնված մաթեմատիկական մոդելավորման, կայունության վերլուծության, վերահսկման, գյուտարարական մտածողության համակարգված մոտեցման, նորարարական ավտոմատացման գործիքների, ինչպես նաև ընկերությունների, տարածաշրջանների և տնտեսությունների նորարարական աճի խնդիրների վրա։

- Հրատարակել է ավելի քան 50 աշխատանքներ ամսագրերում և մասնակցել բազում միջազգային գիտաժողովների կառավարման և համակարգերի տեսության և ավտոմատացման, մաթեմատիկական մոդելավորման, ստեղծարարության և նորարարությունների ոլորտներում,
- Ներգրավված է եղել շուրջ 50 մ.գ.թ. թեզերի և ատենախոսությունների ղեկավարման գործընթացում,
- Աշխատել է առաջատար նորարար տեխնոլոգիական ընկերություններում, ինչպիսիք են՝ Samsung Electronics-ը , LG Electronics-ը՝ որպես ինժեներական նախագծման խմբի խորհրդատու (5 տարի),
- Հրավիրյալ պրոֆեսոր է եղել KumOh ազգային տեխնոլոգիական համալսարանում (Հարավային Կորեա, 1998-1999 թթ.),
- Կրթաթոշակային պրոֆեսոր է եղել Միլանի պոլիտեխնիկ համալսարանում (Իտալիա, 2011 թ.),
- Ֆինլանդիայի Գիտությունների ակադեմիայի կողմից նրան շնորհվել է Ֆինլանդիայի վաստակավոր պրոֆեսորի (FiDiPro) դրամաշնորհ,
- Պատասխանատու է մի շարք տեղական և միջազգային գիտաժողովների գիտական կազմակերպման համար,
- 2016-2021 թթ. որպես համակարգող և հետազոտող ազգային և միջազգային նախագծերից նրա կողմից ստացված դրամաշնորհների ընդհանուր բյուջեն հասնում է 1 մլն եվրոյի։